



---

Գյումրու թիվ 21 դպրոցում երեկ տեղի ունեցավ պետական միջոցներով իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի երկրորդ փուլով Գյումրիում կառուցվող 4-սենյականոց բնակարանների առաջին վիճակահանությունը:

Բնակարանների հերթացուցակում ընդգրկված էր 191 ընտանիք, սակայն բնակարանային բաշխման հանձնաժողովի թույլտվությամբ երեկ վիճակահանությանը մասակցեց 109-ը:

Հիտուն ընտանիք կմասնակցի ավելի ուշ՝ երկու կամ երեք սենյականոց բնակարանների վիճակահանությանը: Ընտանիքների մի մասն էլ չմասնակցեց թերի փաստաթղթերի պատճառով: Նախկինում բնակարան ստանալու կամ ընտանիքի անդամներից մեկի՝ բնակարան ունենալու պատճառով 191 ընտանիքից տասնհինգը հանձնաժողովի կողմից չի ճանաչվել անօթեւան:

Չորսսենյականոց բնակարաններ կշահագործվեն «Մուշ 2» թաղամասում: Հաջորդ վիճակահանությունը նախատեսված է 2012թ. փետրվար-ապրիլ ամիսներին:

**Հայոց Աշխարհ**

**28.12.2011թ.**